

Հ. ԱԶԻԶԵԿՅԱՆ, «Սովետական Հայաստանի էլեկտրիֆիկացիայի պատմությունից»

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1966, 298 էջ

Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ մշակվեց երկրի էլեկտրիֆիկացման պլանը, որն անվանվեց ԳՈԷԼՌՈՒ-ի պլան։ Ըստ այդ պլանի, նախատեսվում էր 10—15 տարվա ընթացքում վերակառուցել եղած էլեկտրակայանները և կառուցել 30 նոր էլեկտրակայան։ Չափազանց մեծ էր էլեկտրիֆիկացիայի դերը ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման, արդյունաբերության, դյուղատնտեսության և տրանսպորտի տեխնիկական վերակառուցման գործում։ Վ. Ի. Լենինը, հանձարեղ խորախափանցությամբ, երկրի էլեկտրիֆիկացիայի մեջ էր տեսնում կոմունիզմի հաղթանակը, նրա նյութա-տեխնիկական բազայի ստեղծման երաշխիքը։ «Կոմունիզմը,—ասում էր Վ. Ի. Լենինը,—դա սովետական իշխանությունն է պլյուս ամբողջ երկրի էլեկտրիֆիկացիան»։

Իրագործելով Վ. Ի. Լենինի կանխագծումները սովետական ժողովուրդը աննախընթաց նվաճումների հասավ երկրի համատարած էլեկտրիֆիկացման, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական վերազինման գործում։

Այդ հարցի գիտական լուսաբանմանն է նվիրված վերջերս ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության կողմից հրատարակված Հ. Ազիզեկյանի «Սովետական Հայաստանի էլեկտրիֆիկացիայի պատմությունից» մենագրությունը։

Աշխատության առաջին գլխում, որը կրում է «Լենինյան պլանի կենսագործման առաջին քայլերը» խորագիրը, մանրամասն լուսաբանված են Սովետական Հայաստանի կուսակցական, սովետական և տնտեսական կազմակերպությունների միջոցառումները էլեկտրիֆիկացիայի վերաբերյալ Լենինյան պլանի կենսագործման ուղղությամբ։

Մեր հանրապետության էլեկտրիֆիկացիայի առաջին քայլերն արվում են Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո։ Ինչպես հայտնի է նախասովետական Հայաստանի արդյունաբերությունը, ինչպես և գյուղատնտեսությունը գտնվում էին ծայր աստիճան քայքայված վիճակում, որոնց վերականգնումը և նոր ինդուստրիայի հիմնումը պահանջում էին էներգետիկ նոր կարողությունների ստեղծում։

1920 թ. Հայաստանում գործում էին մի քանի փոքր, տեղական նշանակություն ունեցող կայաններ, որոնք գտնվում էին կիսավարտ վիճակում, մաշված ու փշացած սարքավորումներով։

1922 թ. ժողտնտխորհին կից կազմակերպված էլեկտրական բաժինը եռանդուն աշխատանք է ձեռնարկում եղած էլեկտրակայանները վերանորոգելու և նորերի կառուցման պլաններ մշակելու ուղղությամբ։ Այդ նպատակով ուսումնասիրվում են հանրապետության ջրային ռեսուրսները, նրանց օգտագործման հնարավորությունները, որոշվում է նորակառույց հիդրոէլեկտրակայանների տնտեսական նպատակահարմարությունը։ Այնուհետև, հանրապետության պետպլանը կազմում է էլեկտրիֆիկացման աշխատանքների 1925—1926 թվականների գործնական պլան, ըստ որի նախատեսվում է կառուցել և սարքավորել Երևանի, Լենինականի, Իջևանի, Ստեփանավանի, Ուզունլարի, Մեղրիի, Դարալագյազի, Գորիսի և Ղաչաղանի էլեկտրակայանները։ Սրանք մեր հանրապետության էլեկտրիֆիկացիայի առաջնեկներն էին։

Աշխատության մեջ հեղինակը փաստական հարուստ տվյալների հիման վրա խորագնին կերպով վերլուծում է Հայաստանում էլեկտրիֆիկացիայի առաջնեկների ստեղծման գործում հայ ժողովրդի հերոսական աշխատանքները, ցույց տալիս այն դժվարությունները, որոնք գոյություն ունեին վերականգնման տարիներին։

Ախատավորության հերոսական աշխատանքի երաշխիքը եղավ այն, որ Երևանի հիդրո-էլեկտրակայանի առաջին հերթը շահագործման հանձնվեց 1926 թ. մայիսին, լենինականի էլեկտրակայանը՝ 1928 թ. նոյեմբերին, որով հանրապետությունում արտադրված էլեկտրաէներգիայի քանակը 1913 թ. մակարդակը գերազանցեց հինգ անգամ:

էներգետիկ բազայի ընդարձակման գործում հսկայական աշխատանքներ կատարվեցին առաջին հնգամյակում: Ավարտվեցին և շահագործման հանձնվեցին Զորագետի հիդրոէլեկտրակայանը, Երևանի և լենինականի էլեկտրակայանների երկրորդ հերթը, Քանաքեռգետի հիդրո-կայանը, Դիլիջանի, Գորիսի, Մեղրիի, Կարմիրի, Դարալագյազի, Ախտայի, Բարանայի և այլ տեղական նշանակություն ունեցող էլեկտրակայանները:

էներգետիկ բազայի ընդարձակման հաջորդ խոշոր միջոցառումներից է Սևան-Հրազդան կասկադի էլեկտրակայանների կառուցումը, որը կարևոր նշանակություն ունեցավ ժողովրդա-կան տնտեսության տարբեր ճյուղերում էլեկտրաէներգիայի պակասը լրացնելու, հանրապետու-թյունում միասնական էներգասիստեմ ստեղծելու գործում:

Սևան-Հրազդան պրոբլեմի լուծումը սկսվեց Քանաքեռգետի շինարարությամբ՝ 1930 թ., որը շահագործման հանձնվեց 1936—1937 թթ.: Հեղինակը հետազոտելով ու ընդհանրացնելով էներ-գետիկ բազայի ստեղծման ու զարգացման պատմությունը, այն սերտորեն շաղկապում է հան-րապետության ինդուստրիայի զարգացման հետ:

Աշխատության երկրորդ գլխում հետազոտված է հանրապետությունում համատարած էլեկ-տրիֆիկացիայի վճռական էտապում հայ հիդրոշինարարների գործունեությունը: Այդ էտապը ընդգրկում է Հայրենական մեծ պատերազմից հետո ընկած ժամանակաշրջանը: Պատերազմի հաղթական ավարտից հետո հանրապետության ժողովրդական տնտեսությունը փոխադրվեց խաղաղ զարգացման ուղու վրա: Այդ ժամանակաշրջանում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի հետ միասին հուժկու վերելք ապրեց նաև էներգետիկ տնտեսությունը: Հետպատերազմյան առաջին հնգամյակում շահագործման հանձնվեց Սևանի ստորերկրյա հիդրոէլեկտրակայանը, որով իսկ սկիզբ դրվեց Սևանա լճի ջրային ռեսուրսների դարավոր պաշարները ժողովրդին ծա-ռայեցնելու վեճ գործին: Դրան զուգընթաց վերակառուցվեց Քանաքեռգետի հիդրոէլեկտրա-կայանը, ընդարձակվեց Զորագետը, կառուցվեցին տեղական միջին էլեկտրակայաններ: Այնու-հետև, մեկը մյուսի հետևից շարք են մտնում Սևան-Հրազդան կասկադի մյուս կառույցները: 1953 թ. շահագործման հանձնվեց Գյումուշգետը, 1957 թ.՝ Արզնիի, 1959 թ.՝ Աթարբեկյանի հիդրոէլեկտրակայանները, իսկ 1962 թ.՝ Երևանի նոր հիդրոէլեկտրակայանը, որոնցով իսկ ավարտվեցին Սևան-Հրազդան կասկադի հիդրոէլեկտրակայանների կառուցման աշխատանքները:

Աշխատությունում հատուկ տեղ է հատկացված ջերմաէլեկտրակայանների կառուցմանը: Ադրբեյջանական ՍՍՀ-ից ստացված բնական գազի բազայի վրա 1960 թ. սկսվեց 550 կիլովատ-տեղություններ Երևանի ջերմաէլեկտրակայանի կառուցումը՝ տարեկան 3,5 միլիարդ կիլովատ-ժամ էլեկտրաէներգիայի արտադրությամբ, որը 1,5 անգամ ավելի է Սևան-Հրազդան կասկադի արտադրած էլեկտրաէներգիայից: Ջերմաէլեկտրակայանը շահագործման հանձնվեց 1966 թ. Բացի Երևանի ջերմաէլեկտրակայանից, ջերմաէլեկտրակենտրոններ ստեղծվեցին նաև Կիրովա-կանում, Հրազդանում:

Այսպիսով, Սովետական Հայաստանը դարձել է համատարած էլեկտրիֆիկացման երկիր: Այդ են ասում նաև հետևյալ փաստերը. 1965 թ. Հայաստանում արտադրվել է 2 միլիարդ 835 միլիոն կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա: Բավական է նշել, որ բնակչության մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրությամբ Հայաստանը ետ է թողել այնպիսի կապիտալիստական երկրներ, ինչպիսիք են Իտալիան, Ճապոնիան, Ֆրանսիան և Բելգիան:

Հայաստանի էներգետիկ տնտեսությունը բուռն զարգացում կապրի ընթացիկ հնգամյակում: Շարք կմտնեն Երևանի, Կիրովականի և Հրազդանի ջերմաէլեկտրակայանները, կկառուցվեն նոր ջերմաէլեկտրակայաններ, կավարտվի Որոտանի և Դեբեդի հիդրոէլեկտրակայանների կասկադների կառուցումը, շահագործման կհանձնվեն մեծ քանակությամբ էլեկտրահաղորդման գծեր ու են-թակայաններ: 1967 թ. հանրապետության էլեկտրակայանները կարտադրեն մոտ հինգ միլիարդ, իսկ 1968 թ. 5,7 միլիարդ կիլովատ-ժամ էլեկտրաէներգիա:

Գրախոսվող աշխատության երրորդ գլուխը նվիրված է էլեկտրիֆիկացիայի լենինյան պլանի իրականացման գործում սովետական հիդրոտեխնիկական գիտության ծառայություններին: Հե-ղինակը իրավացիորեն նշում է, որ «մեր երկրում հիդրոհանգույցների, ջրանցքների, էներգետիկ պաշարների կոմպլեքսային ռզտագործման, միասնական բարձրավոլտ ցանցերի ստեղծման ու ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման փաստը սովետական առաջավոր գիտության անկաշկանդ զարգացման ու ծաղկման վկայությունն է» (էջ 182):

Մեր հանրապետությունում էլեկտրատեխնիկական զիտա-հետադոտական հիմնարկների ստեղծման և էներգետիկ կադրերի պատրաստման առաջին ձևակերպումները կատարվեցին Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին, 1922 թ. էլեկտրատեխնիկական միջին որակի կադրեր պատրաստելու նպատակով Երևանում բացվեց էլեկտրամեխանիկական տեխնիկում, մեկ տարի հետո՝ Լենինականի ինդուստրիալ տեխնիկումը՝ էլեկտրամեխանիկական բաժնով, 1930 թվականին՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, իսկ 1936 թ. ինստիտուտին կից բացվեց էլեկտրատեխնիկական երեկոյան ֆակուլտետը:

Էներգետիկ ուսուցման ուսումնասիրման և այդ բնագավառում ավելի ծավալուն զիտա-հետադոտական աշխատանքներ կատարելու նպատակով 1939 թ. ՍՍՀՄ դիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի երկրաբանական գիտությունների ինստիտուտին կից ստեղծվեց էներգետիկայի և իռիգացիայի սեկտորը, 1938 թ.՝ կենտրոնական էներգոլարությունների Հետազայում հանրապետությունում կազմակերպվում և հաջող գործունեություն են ծավալում «Հայհիդրո-նախագիծ», էներգետիկայի, ջրային պրոլեկտների, երկրաբանական գիտությունների ինստիտուտները, էլեկտրատեխնիկական լաբորատորիան և մի շարք այլ զիտա-հետադոտական հիմնարկներ:

Այդ զիտական հիմնարկները անվանի գիտնականներ՝ տեխնիկական գիտությունների դոկտոր Գ. Ա. Սիսոյանի, տեխնիկական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Հ. Տ. Ադոնցի, ՀՍՍՀ ԴԱ ակադեմիկոս Ի. Վ. Նղիազարովի, տեխնիկական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Ա. Գ. Նազարովի, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ղ. Իոսիֆյանի և շատ այլ ականավոր գիտնականների ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ հսկայական աշխատանքներ են կատարել հանրապետության ջրային ուսուցման հետադոտման, հիդրոէլեկտրիֆիկացիոն բազաների ստեղծման, արդյունաբերության և դուրյատնտեսության մեջ էլեկտրաէներգիայի օգտագործման ողջությամբ:

Աշխատության վերջին՝ շորորդ գլուխը վերաբերվում է գյուղի էլեկտրիֆիկացման պրոլեկտին: Քաղաքի և գյուղի միջև եղած տարբերությունների վերացման գործում մեծ դեր ունեն կատարելու գյուղի էլեկտրիֆիկացումը, գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական զինվածությունը: Վ. Ի. Լենինը մեծ նշանակություն տալով գյուղի էլեկտրիֆիկացմանը իր «Լավ է քիչ, բայց լավ» հոդվածում նշել է, որ անհրաժեշտ է ամեն մի նվազագույն խնայողություն պահել էլեկտրիֆիկացիայի, խոշոր մեքենայական ինդուստրիայի զարգացման համար: «Այդ ժամանակ միայն մենք ի վիճակի կլինենք... մի ձիուց մյուսին նստել, այն է՝ գյուղացիական, մուծիկի աղքատացած ձիուց, քայքայված գյուղացիական երկրին համապատասխանող տնտեսությունների ձիուց նստել... խոշոր մեքենայական ինդուստրիայի, էլեկտրիֆիկացիայի, Վոլխովստրոյ և այլն ձին» (Վ. Ի. Լենին, Նրկեր, հատ. 33, 1952, էջ 598):

Հեղինակը բազմաթիվ փաստերի հիման վրա աշխատությունում լուսաբանում է այն հսկայական միջոցառումները, որոնք իրագործվել են սովետական իշխանության տարիներին հանրապետության գյուղական վայրերի էլեկտրիֆիկացման, էլեկտրաէներգիան գյուղատնտեսությունում և գյուղի աշխատավորության կենցաղում օգտագործելու ողջությամբ:

Ամենից առաջ էլեկտրաէներգիան գյուղատնտեսության մեջ օգտագործվում է ոռոգման ցանցի ստեղծման, ջրանցքների, ջրհան կայանների կառուցման գործում: 1927 թ. շահագործման հանձնվեց անվանի ճարտարապետ Ա. Թամանյանի նախագծով կառուցված Այդր լճի էլեկտրաջրհան կայանը, որն այն ժամանակ հանդիսանում էր ՍՍՀՄ-ում առաջին խոշոր մեխանիկական ջրհան կայանը: Հետագա տարիներին ջրհան կայաններ կառուցվեցին նաև Ալավերդու, Լոկտեմբերյանի, Ախուրյանի, Անիի, Եղեգնաձորի և այլ շրջաններում: Արդեն 1963 թ. հանրապետությունում աշխատում էին 130 ջրհան կայաններ, որոնք ջուր էին մատակարարում մոտ 20175 հեկտար հողատարածության:

Գյուղի էլեկտրիֆիկացման գործում մեծ աշխատանքներ կատարվեցին 1930—1938 թվականներին: Այդ ժամանակաշրջանում շահագործման են հանձնվել Գորիսի, Մեղրու, Իջևանի, Քալինի, Սիսիանի, Միկոյանի և այլ շրջանային էլեկտրակայանները, որոնց շնորհիվ էլեկտրիֆիկացիայի են ենթարկվել տվյալ շրջանների գյուղերը: Հետագայում գյուղի էլեկտրիֆիկացումը ավելի մեծ ծավալ ընդունեց, հատկապես 1948 թվականի ՀԿԿ կենտկոմի «Գյուղի էլեկտրիֆիկացման» մասին որոշումից հետո: 1950 թ. հիմնականում ավարտվեց հանրապետության գյուղերի էլեկտրիֆիկացումը, իսկ մինչև 1956 թ. էլեկտրիֆիկացված էր Հայաստանի կոլտնտեսությունների 79 և սովխոզների 85 տոկոսը: 1964 թ. վերջին հանրապետության բոլոր կոլտնտեսություններն ու սովխոզները միացվեցին պետական էներգասիստեմի ցանցին:

Գյուղի էլեկտրիֆիկացման շնորհիվ հնարավորություններ են ստեղծվել ոչ միայն իրականացնելու գյուղատնտեսական աշխատանքների բազմակողմանի մեքենայացումը, այլև վերափոխելու գյուղի աշխատավորության կենցաղը. զարգացնելու կուլտուրան:

Հ. Ազիզբեկյանի «Սովետական Հայաստանի էլեկտրիֆիկացիայի պատմությունից» աշխատությունը գրված է գիտական բարձր մակարդակով, սահուն ոճով, այն հանդիսանում է մի նոր ներդրում սովետահայ պատմագրության մեջ:

Սակայն հարկ ենք համարում մի քանի դիտողություններ անել աշխատության հրատարակման որակի վերաբերյալ: Գրքի կազմարարական աշխատանքը կատարված է անխնամ, բազմաթիվ էջերի (194, 195, 202, 206, 207 և այլն) շարվածքը թեք է, լուսանցքները միահավասար չեն: Այս ամենը, անշուշտ, պատճառ է հրատարակիչների անուշադիր վերաբերմունքի, որը պատիվ չի բերում ակադեմիայի հրատարակչությանը:

Ա. ՍԱԴԱՂՅԱՆ